ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «15» փետրվարի, 2016 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 03-Ա/Ք

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ և ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ և ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ և ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՒՇԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՂ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄՐՑՈՒՅԹԸ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ՀՐԱՎԵՐԻ ՓԱԹԵԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 18-ի N 1269-Ն որոշման հավելված 1-ի 12-րդ կետի 1-ին և 4-րդ ենթակետերը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ու Մ ԵՄ

1. Հայտարարել հայ-գերմանական համագործակցության շրջանակներում գիտական և գիտատեխնիկական համատեղ նախագծերի աջակցության մրցույթ:
2. Հաստատել մրցույթի հրավերի փաթեթը՝ համաձայն Հավելվածի:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
ՀՀ ԿԳՆ ԳՊԿ նախագահի
2016 թ. փետրվարի 15-ի
թիվ 03-Ա/Ք հրամանի

Հրավեր

«Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության և Գերմանիայի կրթության և հետազոտությունների դաշնային նախարարության միջև գիտության և տեխնոլոգիաների ոլորտներում համագործակցության զարգացման մասին» մտադրությունների հուշագրի շրջանակներում անցկացվող գիտական ու գիտատեխնիկական համատեղ նախագծերի մրցույթի

«15» փետրվարի 2016 թ.

1. Ֆինանսավորման նպատակը և իրավական հիմքերը.

1.1. Նպատակը.

2011 թ. օգոստոսի 24-ին ստորագրված «ՀՀ կրթության և գիտության նախարարության և Գերմանիայի կրթության և հետազոտությունների դաշնային նախարարության միջև գիտության և տեխնոլոգիաների ոլորտներում համագործակցության զարգացման մասին» **ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՒՇԱԳՐԻ** շրջանակներում անցկացվող մրցույթի նպատակն է՝ դրամաշնորհի միջոցով աջակցել.

- երկու երկրների հետազոտական կազմակերպությունների, բարձրագույն ուսումնական հաստատությունների և հետազոտական խմբերի միջև համագործակցության և գիտական համայնքների միջև կապերի զարգացմանը,
- գիտնականների, մասնավորապես, երիտասարդ գիտնականների փոխանակման ծրագրերի իրականացմանը,
- երկկողմ հետաքրքրություն ներկայացնող գիտական համագործակցային նախագծերի իրականացմանը,
- գերմանական և հայաստանյան կազմակերպությունների՝ ԵՄ շրջանակային ծրագրերին համատեղ մասնակցությանը,
- Հայաստանի Հանրապետության գիտական համայնքի՝ Եվրոպական գիտահետազոտական տարածք ինտեգրմանը:

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեն և Գերմանիայի կրթության և հետազոտությունների դաշնային նախարարությունը հայտարարում են սույն **ՄՐՑՈՒՅԹԸ**՝ համատեղ հետազոտական նախագծեր նախապատրաստելու և կայուն գործընկերություն ձևավորելու նպատակով:

1.2. Իրավական հիմքերը.

Հայաստանյան կողմի հայտատուների համար.

Հայաստանյան կողմի համար մրցույթի անցկացման իրավական հիմքն է 1.1 ենթակետում նշված Հուշագիրը: Դրամաշնորհ տրամադրվում է ՀՀ պետական բյուջեի գիտական և

գիտատեխնիկական գործունեության ծրագրերի գծով ծախսերի «Միջազգային գիտական համագործակցություն» ծախսային ենթածրագրի ֆինանսական միջոցների հաշվին:

Գերմանական կողմի հայտատուների համար՝ տես [Հրավերի անգլերեն տեքստ](#)՝ 1.2 կետ, մաս 1-ին:

2. Ֆինանսավորման առարկան.

Նախագծերը կարող են ներկայացվել ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի և Գերմանիայի կրթության և հետազոտությունների դաշնային նախարարության կողմից սահմանված գիտական հետազոտությունների հետևյալ ուղղություններով.

- կենսատեխնոլոգիա/գիտություններ կյանքի մասին,
- նանոտեխնոլոգիաներ,
- նյութագիտություն,
- օպտիկական տեխնոլոգիաներ,
- տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ,
- բնապահպանական տեխնոլոգիաներ ու կայուն զարգացմանն ուղղված հետազոտություններ:

Ֆինանսավորման ենթակա են համատեղ նախագծի նախապատրաստմանն առնչվող գործուղումների, նախագծի շրջանակներում բարձր որակավորման գիտնականների միջև աշխատանքային հանդիպումների և փոխանակման ծրագրերի, ինչպես նաև նախագծի վերաբերյալ թեմատիկ աշխատանքային խորհրդակցությունների կազմակերպմանն ուղղված ծախսերը:

Ֆինանսավորումը կտրամադրվի, մասնավորապես, գիտական համագործակցության զարգացման և ընդլայնման, ինչպես նաև հայաստանյան և գերմանական կազմակերպությունների համատեղ գիտական նախագծերի իրականացման համար: Այս նախագծերի նպատակն է՝ նպաստել նշված ոլորտներում գիտական և նորարարական գործունեության հետագա առաջխաղացմանը:

3. Ֆինանսավորման հասցեատերերը.

Հայաստանյան կողմից մրցույթին կարող են մասնակցել՝

ՀՀ պետական բուհերը, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի համակարգի, և այլ գերատեսչական պատկանելություն ունեցող գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող պետական կազմակերպությունները:

Գերմանական կողմի համար՝ տես [Հրավերի անգլերեն տեքստ](#)՝ 3-րդ կետ, 1-ին և 2-րդ մասեր:

4. Ֆինանսավորման նախապայմանները/բնույթը, շրջանակները և ծավալները.

Երկկողմ հետազոտական նախագծերը ֆինանսավորվում են 12 ամիս ժամկետով: Յուրաքանչյուր նախագծի ընդհանուր բյուջեն կազմում է առավելագույնը 26 000 եվրո, ընդ որում՝ գերմանական կողմի հատկացումները կկազմեն առավելագույնը 20 000 (քսան հազար) եվրո, իսկ հայաստանյան կողմինը՝ առավելագույնը 6 000 (վեց հազար) եվրոյին համարժեք ՀՀ դրամ: **Ֆինանսավորումը նախատեսվում է սկսել 2016 թ. նոյեմբերի 1-ից:**

Ֆինանսավորումը տրամադրվում է հայաստանյան ու գերմանական կողմերի **պարտավորություններով ստանձնած մասնաբաժիններին** համապատասխան՝ որպես անհատույց օժանդակություն:

Հայտատուները պետք է տեղյակ լինեն ԵՄ շրջանակային գիտահետազոտական ծրագրերի գերակա ոլորտներից: Հայտատուները պետք է ճշտեն, թե արդյո՞ք նախագիծը համահունչ է եվրոպական ծրագրերի առանձնահատկություններին և, որպես այդպիսին, արդյո՞ք այն ենթակա է ԵՄ բացառիկ ֆինանսավորման: Հայտատուները պետք է ճշտեն նաև, թե ի՞նչ չափի լրացուցիչ ֆինանսավորում ստանալու հայտ կարող են ներկայացնել ԵՄ ներկայացված ազգային ծրագրի շրջանակներում: Այս ճշտումների արդյունքները պետք է հակիրճ ներկայացվեն հայտում:

4.1. Հայաստանյան կողմը հոգում է հետևյալ ծախսերը.

ա. Մասնագետ հետազոտողների և երիտասարդ գիտնականների փոխանակումներ.

Հայաստանյան կողմից նախաձեռնվող Գերմանիա այցի դեպքում. ճանապարհածախսը՝ էկոնոմ դասի ուղետոմսի արժեքի չափով, հոգում է հայկական կողմը, իսկ օրապահիկի ծախսերը հոգում է գերմանական կողմը:

բ. Այցելությունների ֆինանսավորում.

Հայաստան կատարվող այցի դեպքում կիրառվում է հետևյալը. հայաստանյան կողմը օրապահիկի (գիշերավարձ) և ներքին ուղևորությունների համար հատկացնում է օրական 100 եվրոյին համարժեք ՀՀ դրամ, իսկ մինչև 1 ամիս տևողությամբ (տարեկան 1 անգամ) այցերի համար հատկացվում է ամսական առավելագույնը 2000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ: Առողջության կամ այլ ապահովագրությունները պետք է վճարվեն ըստ ամրագրված հատկացումների՝ ֆինանսավորումը ստացողի կողմից:

Նախագծի գործընկերոջ գտնվելու վայր հասնելու հետ կապված ուղեվարձը հոգում է ուղարկող կողմը:

գ. Նյութերի ձեռքբերում.

Նախագծին առնչվող ծախսերը, այդ թվում՝ նյութերի, սարքավորումների, փոխադրամիջոցային ծախսերի, գրականության ձեռքբերման, վարձակալության, պատվերների և այլ ծախսեր, կարող են փոխհատուցվել սահմանափակ չափով և բացառիկ դեպքերում՝ դրանց կատարման անհրաժեշտությունը հավաստող փաստաթղթերի առկայության հիման վրա:

դ. Աշխատանքային խորհրդակցությունների անցկացում.

Գործող կամ նորաստեղծ համագործակցության շրջանակներում աշխատանքային խորհրդակցությունները ֆինանսավորվում են հետևյալ կերպ.

Հայաստանում կազմակերպվող երկկողմ աշխատանքային խորհրդակցությունների համար ֆինանսական միջոցներ տրամադրվում են հյուրերի կեցության, Հայաստանում տրանսպորտային փոխադրումների, կազմակերպչական, պաշտոնական ընթրիքի ու տարածքի վարձակալության նպատակներով: Ֆինանսավորման ընդհանուր ծավալը կախված է միջոցառման ընդգրկվածությունից ու օտարերկրյա հյուրերի քանակից: Այս դեպքերում օրապահիկի համար միջոցներ նախատեսված չեն:

ե. Նախագծի հետ առնչվող ֆինանսական միջոցներ կարող են հատկացվել ուսանողին և (կամ) վարչական ու գիտական անձնակազմի ներկայացուցչին:

զ. Որպես կանոն, ֆինանսավորում չի տրամադրվում.

գրասենյակային գույքի ձեռքբերման կամ կապի ծառայությունների համար,

լաբորատոր և (կամ) SS սարքավորումների համար:

Գերմանական կողմի համար՝ տես [Հրավերի անգլերեն տեքստ](#)՝ կետ 4.1:

5. Ընթացակարգ.

5.1. Մրցույթի իրականացման գործընթացի պաշտոնական պատասխանատուներ.

Հայաստանյան կողմ.

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աշխատակազմի գիտական գործունեության կազմակերպման վարչությունը նշանակվել է սույն ՄՐՑՈՒՅԹԻ կազմակերպման գործընթացի պատասխանատու.
Գիտական հարցերով պատասխանատու՝
Գիտական գործունեության կազմակերպման վարչության պետ՝
Ռուզան Ասատրյան
հեռ. 21 01 40 – 112
Տեխնիկական հարցերով պատասխանատու ՝
Գիտական գործունեության կազմակերպման վարչության միջազգային համագործակցության բաժնի պետ՝
Մարիանա Սարգսյան
Հեռ. 21 01 40-115

Գերմանական կողմի համար՝ տես Հրավերի անգլերեն տեքստ՝ կետ 5.1:

5.2. Հայտերի ընդունում և ֆինանսավորման վերաբերյալ որոշման կայացում.

Յուրաքանչյուր կողմ հայտը ներկայացնում է իր երկրի պաշտոնական պատասխանատուին՝ ըստ տվյալ կողմի սահմանած կարգի:

Մրցույթի հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ **2016 թվականի մայիսի 31-ն է:**

Հայտը պետք է պարունակի.

1. ընդհանուր տեղեկություններ՝ ներառելով բնագավառը, վերնագիրը և նախագծի համառոտ բովանդակությունը,
2. նախագծի հայաստանյան և գերմանական համակարգողների՝ կոնտակտային և այլ տվյալները,
3. Հայաստանից և Գերմանիայից մասնակից այլ կազմակերպությունների կոնտակտային և այլ տվյալները,
4. նախագծի նկարագրությունը՝ ներառյալ մանրամասն աշխատանքային պլանը՝ **(Հավելված 1)** և բյուջեի մանրամասն նկարագիրը՝ նախատեսվող յուրաքանչյուր ծախսի համար հստակ մեկնաբանությամբ և ինքնաֆինանսավորման հնարավորությունների նկարագրությամբ **(Հավելված 2)**:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել հայաստանյան և գերմանական համակարգողների կողմից ստորագրված տպագիր հայերեն և անգլերեն տարբերակներով: Այդ տարբերակը պետք է ուղեկցվի նաև էլեկտրոնային տարբերակով: Հայտի ձևը տեղադրված է կոմիտեի պաշտոնական կայքի (www.scs.am) <<**Մրցույթներ**>> բաժնում: Հայտի փորձաքննությունն իրականացվելու է ըստ սույն Հրավերի 6-րդ կետում նշված չափանիշների, ընդ որում՝ հայաստանյան և գերմանական կողմերը փորձաքննությունն իրականացնում են ինքնուրույն՝ փորձագիտական համակարգի միջոցով:

Հայտերը ներկայացվում են ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտե (708 սենյակ) ՝ հայաստանյան կողմի համակարգողի ստորագրված դիմումով, աշխատանքային օրերին, ժամը 10^{00} – 13^{00} և 14^{00} – 17^{00}, հետևյալ հասցեով.

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտե
Օրբելի եղբայրների փողոց 22, 7-րդ հարկ, 708 սենյակ
Հեռ. 21 01 40 -115, 112
Էլ. հասցե՝ info@scs.am

6. Հայտի գնահատման չափանիշները.

Հայտերը գնահատվում են ըստ հետևյալ չափանիշների՝

- համապատասխանություն հրավերի 2-րդ կետում նշված բնագավառներին և սույն Հրավերով նախատեսված այլ պայմաններին,
- հայտատուի և ներգրավված գործընկերների մասնագիտական որակավորում,
- նախագծի տեխնիկական որակ, ինքնատիպություն, արդիականություն,
- նոր համագործակցային կապերի հաստատում, համագործակցության հեռանկարայնություն,
- համագործակցության մակարդակ և համագործակցող կազմակերպությունների համար ակնկալվող շահավետություն/օգտավետություն/,
- աջակցություն երիտասարդ գիտնականներին,
- գիտական շահութաբերությունը և ակնկալվող արդյունքների կիրառելիություն,
- ֆինանսավորում ստանալու անհրաժեշտություն և դրա տրամադրման նպատակահարմարություն:

Համատեղ նախագծերի երաշխավորման վերաբերյալ վերջնական որոշումը կկայացվի ըստ վերը նշված չափանիշների կատարված վերջնական գնահատման: Հայտատուն արդյունքերի մասին կտեղեկացվի գրավոր:

7. Ֆինանսավորման այլ պայմաններ գերմանական կողմի համար՝ տես *Հրավերի անգլերեն տեքստ*՝ կետ 6:

8. Ուժի մեջ մտնելը՝

Հայտարարությունն ուժի մեջ է մտնում ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի պաշտոնական կայքում տեղադրելու օրվանից: